ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՌՈԲԵՐՏԻ ԳԱԼՈՅԱՆ

ԳՆԱՃԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀ ՆՅՈՒԹԵՐՈՎ)

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի Միքայելի Սուվարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
Արմեն Աշմատի Հակոբյան

տնտեսագիտության թեկնածու
Արթուր Ռաֆիկի Թամազյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. հունիսի 22-ին, ժամը 15^{30} -ին,

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան 0025, Մ. Նալբանդյան փող.,128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական

տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. մայիսի 22-ին:

014 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա.Գևորգյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Շուկայական տնտեսության սոցիալական և տնտեսական հարաբերությունների զարգացման արդի փուլի կարևորագույն գերակայություններից է գնաճի արդյունավետ կարգավորման ապահովումը, որի իրականացման գործում մեծ դեր ունի հիմնավորված դրամավարկային քաղաքականության վարումը: Կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականություն մշակելիս ներկայացնում է հաջորդական ռազմավարական քայլեր, որոնք ենթադրում են հստակ և երկարաժամկետ կառավարում: Նմանատիպ ռազմավարությունը, սովորաբար, ծրագրերի ամբողջություն է, որը պայմանականորեն կարելի է բաժանել ըստ գործառնական, միջանկյալ և հիմնական կառավարման, ինչպես նաև ամեն մի մակրոտնտեսական իրավիճակին բնորոշ՝ առաջնային և երկրորդական նպատակների փուլերի: Վերջիններս իրագործվում են դրամավարկային կարգավորման կառուցակարգի և գործիքների միջոցով:

ՀՀ կենտրոնական բանկի հիմնական նպատակը գների կայունության ապահովումն է, որի ոչ բարենպաստ ընթացքի պարագայում կարող են առաջանալ մի շարք՝ ինչպես սոցիալական, այնպես էլ տնտեսական բնույթի խնդիրներ: Ընդ որում, գների կայունության ապահովմամբ Հայաստանի Հանրապետությունում հնարավոր է ոչ միայն խթանել, այլև զսպել տնտեսական աճը: Հարկ է նշել, որ ՀՀ կենտրոնական բանկն իր գործառույթների շրջանակներում կարողանում է զսպել գների աճը հանրապետությունում, սակայն ի զորու չէ լիարժեքորեն կանխատեսելու և վերացնելու բոլոր այն ռիսկերը, որոնք կապված են միջազգային շուկաների ցնցումների հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում գների մակարդակը մեծապես կախված է նաև փոխարժեքի տատանումներից, գերակա խնդիրներ են գնաճի ճիշտ գնահատումն ու փոխարժեքի տատանումների կանխատեսումը: Այս քայլերի իրականացմամբ է միայն հնարավոր նվազագույնի հասցնել վերջիններիս ազդեցությունը ֆինանսական շուկայի վրա: Գնաճի տեմպի կրճատմանն է միտված նաև հարկային տարբերակված քաղաքականության վարումը: Վերոնշյալ հիմնախնդիրներն ունեն գիտական լուրջ հետազոտման և գնահատման կարիք, ինչն էլ պայմանավորում է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում կենտրոնական բանկի գործառույթների, հարկաբյուջետային քաղաքականության, ինչպես նաև տնտեսական զարգացումների ուսումնասիրությամբ և վերլուծությամբ գնահատել գնաճի կարգավորման արդյունավետությունը ՀՀ-ում, վեր հանել նշված գործընթացի վրա ազդող գործոնները, հասարակության տնտեսական ակտիվության վրա գնաճի ազդեցության չափի հաշվարկման և գնահատման կարգն ու մեթոդները՝

ըստ այդմ ներկայացնելով համապատասխան տեսամեթոդաբանական և գործնական առաջարկություններ:

Հետազոտության նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել գնաճի էությունը և ֆինանսական կարգավորման հիմքերը,
- կատարել ՀՀ-ում գնաճի դինամիկայի և տնտեսության վրա ազդող ֆինանսական գործոնների վերլուծություն,
- դիտարկել գնաճի մակարդակի և արտարժույթի փոխարժեքների փոխկապվածությունը,
- վերլուծել կենտրոնական բանկի կողմից գնաճի նպատակադրման քաղաքականության և սահմանաչափերի կիրառման նպատակահարմարությունը, ինչպես նաև ներկայացնել գնաճի նաակադրման քաղաքականության առանձնահատկությունները սեզոնային գնաճի կարգավորման գործում,
- կատարել կենտրոնական բանկի գործունեության SWOT վերլուծություն,
- բացահայտել գնաճի ներքին և արտաքին ռիսկերի ազդեցությունը հարկաբյուջետային քաղաքականության վրա,
- ուսումնասիրել դրամավարկային քաղաքականությունն ու դրա գործիքների ազդեցությունը տնտեսական և ֆինանսական շուկաների վրա,
- գնահատել գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետությունը և առաջարկել դրա բարելավման ուղիներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունն է՝ գնաճի կարգավորման արդյունավետության գնահատման տեսանկյունից:

Հետազոտության առարկան գնաճի ֆինանսական և տնտեսական կարգավորման հիմնախնդիրներն են, ինչպես նաև դրանց լուծման արդյունավետ ուղղությունները:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Ատենախոսության տեսական հիմքն են մակրոտնտեսագիտության, գնաճի, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ տեղական և արտասահմանյան հեղինակների հետազոտությունները, հրապարակումներն ու գիտավերլուծական նյութերը: Վերլուծության տեղեկատվական աղբյուր են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրատարակումները, ՀՀ ԿԲ-ի կողմից հրատարակվող՝ տարեկան, եռամսյակային և ամսական հաշվետվությունները, միջազգային կազմակերպությունների, խորհրդատվական և տեղեկատվական ընկերությունների տեղեկագրերը, փորձագիտական և վերլուծական նյութերը, ինչպես նաև ուսումնասիրության

հիմնախնդրին վերաբերող՝ ՀՀ-ում շրջանառվող մի շարք օրենսդրական և նորմատիվային ակտեր, էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսներ:

Հետազոտության գիտական նորույթը և արդյունքները: Ատենախոսության գիտական արդյունքները տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածության են, որոնց գիտական նորույթը հետևյալն է.

- ԱՄՆ դոլարի ու ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքների և գնաճի փոխկապվածության վերլուծությամբ բացահայտվել է փոխարժեքների ազդեցությունը գնաճի մակարդակի վրա՝ միաժամանակ առաջադրելով կարգավորման, կանխատեսման և զսպման հնարավորինս ճշգրիտ մոտեցումներ:
- ՀՀ ԿԲ գործունեության SWOT վերլուծության արդյունքում, գնահատելով ուժեղ և թույլ կողմերը, բացահայտվել և որպես ՀՀ ԿԲ թույլ կողմ է ներկայացվել արտարժույթի փոխարժեքի տատանումների և դրանց ոչ լիարժեք ու ճշգրիտ կանխատեսման հնարավորությունները, ինչը բացասաբար է ազդում գների մակարդակի և գնաճի կարգավորման արդյունավետության վրա:
- Վերլուծվել և գնահատվել է ԿԲ-ի կողմից գնաճի նպատակադրման քաղաքականության անցման և սահմանաչափերի կիրառման նպատակահարմարությունը, ինչպես նաև բացահայտվել և ներկայացվել են համապատասխան քաղաքականության առանձնահատկությունները սեզոնային գնաճի կարգավորման գործում:
- ՀՀ-ում գործող հարկային քաղաքականության, մասնավորապես՝ ավելացված արժեքի և շրջանառության հարկեր վճարողների հարկման տարբերությունների վերլուծությամբ բացահայտվել է տոկոսադրույքների ազդեցությունը գնաճի մակարդակի վրա, հիմնավորվել հարկման տարբեր համակարգերի դերը՝ որպես տնտեսության մեջ սղաճի խթանման ներքին գործոններ:
- Մշակվել և ներկայացվել են գնաճի կարգավորման քանակական և որակական գնահատման մեթոդական սկզբունքներ: Գնահատման նպատակով հետազոտվել է ՀՀ պետական բյուջեով սահմանված նվազագույն և առավելագույն շեմերից գնաճի մակարդակի շեղումը ըստ տարիների: Ցուցանիշների հետազոտությամբ բացահայտվել է շեղման չափի նվազման միտում՝ փաստելով գնաճի կարգավորման բարելավում:

Հետազոտության գործնական նշանակությունը և արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունում տեղ գտած՝ գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության մակարդակի բարելավմանը միտված առաջարկությունները կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետությունում

գնաճի կարգավորման և զսպման, տնտեսական կայունության ապահովման, տնտեսությանը սպառնացող արտաքին ռիսկերի ազդեցության նվազեցման, ինչպես նաև փոքր, միջին և խոշոր կազմակերպությունների միջև փոխգործակցության ապահովման նպատակներով՝ բացառելով հարկային քաղաքականության խոչընդոտները:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության դրույթները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի հրապարակած 4 (չորս) գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը, ծավալը և հրապարակումները: Ատենախոսության տեքստը շարադրված է 122 համակարգչային էջում, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածությունում հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակները և խնդիրները, ուսումնասիրության առարկան և օբյեկտը, ներկայացվել են տեսական և տեղեկատվական հիմքերը, ինչպես նաև գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին՝ «Գնաճը և դրա տնտեսական կարգավորման հիմքերը» գլխում ներկայացվել են գնաճը և դրա գնահատման մեթոդները, գնաճի տեսակները, տնտեսական և ֆինանսական առանձնահատկությունները, ինչպես նաև գնաճի ազդեցությունը ֆինանսական շուկաների և սոցիալ-տնտեսական գործոնների վրա:

Գնաճը գների ընդհանուր մակարդակի բարձրացումն է, և պետության հիմնական խնդիրներից մեկը գների կայունության ապահովումն է: Սակայն, հարկ է նշել, որ հնարավոր չէ գները պահպանել միևնույն մակարդակի վրա, հետևաբար՝ դրանց կայունության ապահովումը պայմանավորված է գնաճի չափավոր մակարդակի պահպանմամբ:[1] Այս առումով, գնաճի տեմպի հաշվարկը կարևոր նշանակություն ունի, որովհետև հնարավորություն է տալիս գնահատելու վնասի այն չափը, որն առաջանում է գնաճի հետևանքով: Հայաստանի Հանրապետությունում սպառողական գների ինդեքսը գնաճը բնութագրող միակ ցուցանիշն է:[2] Գնաճի առաջացման պատճառները կարող են ներկայացվել երկու խոշոր խմբերով՝ ներքին և արտաքին: Եթե ներքին պատճառները պայմանավորված են հիմնականում երկրի ազգային տնտեսության գործունեությամբ, սոցիալ-տնտեսական խնդիրներով, ապա արտաքինները կապված են ազգային տնտեսության վրա ազդող արտաքին գործոնների հետ:[3]

Գնաճին բնորոշ են ֆինանսական տարբեր դրսևորումներ: Այսպես՝ պահանջարկածին գնաճի պարագայում առաջանում է փողի էմիսիա, տեղի է ունենում եկամուտների տեղաբաշխում, բյուջեի մեծացում, արձանագրվում է զբաղվածության մակարդակի աճ, իսկ ծախսածին գնաճի դեպքում տեղի է ունենում միավոր արտադրանքի ինքնարժեքի բարձրացում, որին զուգընթաց՝ նաև արտադրության ծավալի կրճատում, միավոր արտադրանքի գների աճ, ինչպես նաև ռեսուրսների գերագնահատում՝ համեմատած նախնականի հետ ու

---

[1] В. Кизилов, Гр. Сапов. Инфляция и её последствия / под ред. Е. Михайловской. — М.: Центр «Панорама», 2006. — с 146.

[2] ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում. 2006, www.cba.am ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, 13 էջ:

[3] Amitava K.Dutt, Peter Skott."Keynesian Theory and the AD-AS Framework: A Reconsideration," Working Papers, 2005-11, University of Massachusetts Amherst, Department of Economics. 2005, p. 357.

կիսաֆաբրիկատ և պատրաստի արտադրանքների գների բարձրացում արհեստական թերարտադրության հաշվին:[4]

Ատենախոսության երկրորդ՝ «Գնաճի դինամիկայի և տնտեսության ֆինանսական գործոնների վերլուծությունը ՀՀ-ում» գլխում, ներկայացնելով դրամավարկային քաղաքականությունը՝ որպես գնաճի կարգավորման գործիք, ՀՀ ԿԲ գնաճի նպատակադրման քաղաքականության արդյունավետությունը և սեզոնային գնաճի դինամիկայի գնահատումը, ինչպես նաև գնաճի մակարդակի և արտարժույթի փոխարժեքների փոխկապվածության վերլուծությունը: Անդրադարձ կատարելով դրամավարկային քաղաքականության էությանը՝ նշվել է, որ կենտրոնական բանկն այդպիսով ձգտում է դրամական զանգվածի քանակական փոփոխությունների միջոցով ներգործել տնտեսական աճի տեմպերի, փողի զանգվածի և հասարակության գործարար ակտիվության վրա: Համապատասխան քաղաքականության զարգացման առումով, շեշտադրվել է այն միտքը, որ միակ արդյունավետ լուծումն անցումն է գնաճի նպատակադրման ռազմավարությանը:[5] Այսպիսով՝ նոր ռազմավարության ներքո դրամավարկային քաղաքականությունն ուղղվում է գնաճի կանխատեսված և ծրագրային մակարդակների միջև շեղումների վերացմանը: Որպես դրամավարկային քաղաքականության հիմնական գործիք՝ սահմանվել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, իսկ իբրև գնաճի ծրագրային մակարդակ՝ 4±1,5% միջակայքը: ՀՀ-ում գնաճի նպատակադրման քաղաքականությունը թեև գործնականում ցուցաբերել է արդյունավետություն, մի կողմից՝ փոխարժեքի արժևորման զսպման, մյուս կողմից՝ գնաճի ցածր մակարդակի պահպանման տեսանկյունից, այդուհանդերձ, առկա է գների աճի և նվազման հստակ սեզոնային միտում, ինչը լիարժեքորեն հաշվի չի առնվում: Գնաճային նման տատանումներ դրսևորվել են ոչ թե մեկ, այլև մի քանի տարիների կտրվածքով: Հետևաբար՝ գնաճային երևույթների վերլուծությունն ու մակրոտնտեսական ցուցանիշների պատճառահետևանքային կապերի բացահայտումն անհրաժեշտություն է ՀՀ-ում գնաճի նպատակադրման քաղաքականություն իրականացնելիս:[6]

ՀՀ գնաճի սեզոնային բնույթը, ըստ գյուղատնտեսական մթերքների գների համաթվի, արտացոլված է գծապատկեր 1-ում:

---

[4]Henri. L.Beenhaker, The Global Economy and International Financing,Library of Cogress Cataloging-in-Publication data, 2001, page 257.

[5]«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասինե ՀՀ օրենք, հոդված 4:

[6] ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից գնաճի նպատակադրման ռազմավարության ընդունման հիմնավորում. 2006, www.cba.am ՀՀ ԿԲ պաշտոնական կայք, էջ 16:



Գծապատկեր 1. Սեզոնային գնաճը ՀՀ-ում՝ ըստ եռամսյակների[7]

Ինչպես երևում է, գծապատկերից, գյուղատնտեսական ապրանքների գնաճը տարվա ընթացքում գերազանցել է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած մակարդակը՝ հասնելով 19%-ի: Գնաճի մակարդակը կարող է շեղվել սահմանված չափից ոչ միայն բնականոն սեզոնային գների տատանումներից, այլ նաև՝ արտարժույթի:[8] Գնաճի մակարդակի և արտարժույթի փոխարժեքների մակարդակի փոխկապակցվածությունը ուսումնասիրելու համար հեղինակի կողմից աղյուսակ 1-ում ներկայացվել է ԱՄՆ դոլարի և ռուսական ռուբլու միջին տարեկան հարաբերակցությունը ազգային արժույթի նկատմամբ 2009-2015 թթ. ընկած ժամանակահատվածում:

Աղյուսակ 1[9]

ՌԴ և ԱՄՆ արժույթների փոխարժեքները՝ ՀՀ դրամով 2009-2015 թթ.

	2009	2010	2011	2012	2013	2014	2015
ՌԴ ռուբլի	11.5	12.32	12.7	12.94	12.88	10.98	7.89
ԱՄՆ դոլար	363.28	373.66	372.5	401.76	409.63	415.92	477.92

[7] Գծապատկերը կազմել է հեղինակը՝ ըստ www.armstat.am կայքի տվյալների:
[8] Valen E. Johnson, Grade Inflation a crisis in college education, 2006, page 75
[9] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ըստ www.armstat.am կայքի տվյալների:



Գծապատկեր 2[10]. ՀՀ գնաճի մակարդակն ըստ 2006-2015 թթ.

Գծապատկեր 2-ում արտացոլված է ՀՀ գնաճի մակարդակն ըստ 2006-2015 թվականների ցուցանիշների: Ակնհայտ է, որ դիտարկվող տարիների ընթացքում գնաճի ամենաբարձր մակարդակն արձանագրվել է 2009 թ. ավարտին՝ հասնելով գրեթե 12%-ի, ընդ որում, նույն ժամանակահատվածում հայկական դրամն արժևորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հասնելով 363.28 դրամ և արժեզրկվել ռուսական ռուբլու նկատմամբ՝ 11.5 դրամ: Պատկերն այլ է 2015 թ., երբ ԱՄՆ դոլարի փոխարժեքը հասել է գագաթնակետին և արձանագրվել է դրամի արժեզրկում՝ մինչև 477.92 դրամ, իսկ ռուսական ռուբլին արժեզրկվել է՝ հասնելով 7.89 դրամի: Նշված ժամանակահատվածում գնաճի մակարդակը նվազել է 2-4%-ի միջակայքում: Այս տվյալներից երևում է, որ ՀՀ դրամը հատկապես զգայուն է ռուսական ռուբլու նկատմամբ:

Ատենախոսության երրորդ՝ «Գնաճի մակրոտնտեսական կարգավորման կատարելագործումն ու գնահատումը» գլխում ներկայացված են կենտրոնական բանկի գործունեության SWOT վերլուծությունն ու դրա արդյունքները, գնաճի ներքին և արտաքին ռիսկերը և ֆինանսական կարգավորման հեռանկարները, գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության գնահատումը և դրա բարելավման ուղիները ՀՀ-ում:

Հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետությունում կենտրոնական բանկն է հանդիսանում գների կայունության ապահովումը[11], հետևաբար՝

[10] www.cba.am

անհրաժեշտ է վերլուծել հենց նշված կառուցի գործունեության արդյունավետությունը: Այդ նպատակով, նախ՝ պետք է լուսաբանել ԿԲ-ի գործունեության ուժեղ և թույլ կողմերը, որոնցով էլ պայմանավորված են վերջինիս իրագործման հեռանկարները, ապա բացահայտել հնարավոր մարտահրավերները (գծապատկեր 3):

Գծապատկեր 3. ԿԲ-ի գործունեության SWOT վերլուծություն՝ ՀՀ ԿԲ օրինակով[12]

---

[11]«ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 4

[12] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից ըստ Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության կենտրոնական բանկերի գործունեության SWOT վերլուծությունների օրինակների, http://jurisprudent.site

Վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ ՀՀ ԿԲ թույլ կողմերից մեկը արտարժույթների փոխարժեքների տատանումների և դրանց ոչ լիարժեք ու ճշգրիտ կանխատեսման հնարավորությունն է, ինչը բացասաբար է անդրադառնում գների մակարդակի և գնաճի կարգավորման արդյունավետության վրա: ՀՀ ԿԲ-ն շատ հաճախ շրջանցում է ՀՀ դրամի արժեզրկման վտանգը, ինչն այնուամենայնիվ առկա է վերջին տարիներին: Պատճառներից մեկն այն է, որ այդ ժամանակահատվածում ՀՀ համախառն միջազգային պահուստները նվազել են մոտավորապես 31%-ով (համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2430.6 միլիոն ԱՄՆ դոլարից հասնելով 1663.1 միլիոն ԱՄՆ դոլարի)[13]: Այս ամենը բացասաբար է ազդել ՀՀ-ում գների մակարդակի և ՀՀ ԿԲ-ի կողմից գնաճի կարգավորման արդյունավետության վրա:

Միաժամանակ, չի կարելի անտեսել ՀՀ ներքին տնտեսական ռիսկերը, պայմանավորված հարկաբուջետային քաղաքականության և հարկային վարչարարության չափազանց խստությամբ, ինչպես նաև ՀՀ-ում հարկերի հավաքագրման տարբեր մեխանիզմների կիրառմամբ: Վերջիններս հանդիսանում են գնաճի ձևավորման խթան, քանի որ առաջացնում են խոչընդոտներ տարբեր մեխանիզմներով հարկվող կազմակերպությունների միջև առևտրային գործարքներ իրականացելու ընթացքում, մասնավորապես բարձրացնելով հարկման բազան[14]:

Վերլուծելով գնաճի բարձր մակարդակը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ դրա պատճառները չի կարելի փնտրել միայն ՀՀ-ում: Այլ կերպ ասած՝ կան առարկայական գործոններ, որոնք ակամայից հարկադրում են ընդունել տնտեսավարման խաղի կանոնները «դրսից»: Այս պարագայում, որպես բաց շուկայական երկիր, ՀՀ-ն հատկապես ապրանքներ ներմուծելիս ընդունում է այն գները, որոնք ձևավորված են համաշխարհային շուկայում: Ոմանց համար այս օրինաչափությունը շահարկման առարկա է դարձել հատկապես միջազգային գների բարձրացման պարագայում:

Գնաճի նպատակադրման և փոխարժեքային քաղաքականության ընտրությունը և դրանց համակարգային կառավարման արդյունավետությունը մեծ կարևորություն ունի զարգացող երկրների դրամավարկային քաղաքականություններում:[15] Այս խնդրի հետազոտումը հատկապես կարևոր է Հայաստանի Հանրապետությունում, որպես երկարատև տնտեսական աճի ապահովման նախադրյալ: Գնաճի նպատակադրման քաղաքականության ընթացքում անվանական փոխարժեքի՝ որպես տնտեսական ցնցումների կլանիչի արդյունավետության հետազոտումը մեծ կարևորություն ունի: Այս հարցն

[13] www.armstat.am

[14] Q. Ashton Acton, PhD General editor, Issues in General Economic Research and Application: 2013 Edition, p. 1053

[15] Ֆրիդման Չ., Լաքստոն Զ., Ինչու՞ գնաճի նպատակադրում, ԱՄՀ, 2009թ., էջ 247

առնչություն ունի փոխարժեքի փոփոխության և ներքին գների անցման փոփոխության աստիճանի հետ: Շատ դեպքերում փոխարժեքի և ներքին գների անցումային կապի ուսումնասիրության ընթացքում չի դիտարկվում տվյալ անցումային կապի և փոխարժեքի՝ որպես շոկի կլանման արդյունավետության, փոխհարաբերության հարցը:

Գնաճը իր տրամաբանությամբ մոտ է փոխարժեքի արժևորմանը: Գնաճն առնչվում է ներքին շուկայում ազգային արժույթի գնողունակության ուժի փոփոխության հետ:[16] Ըստ էության երկուսն էլ բնութագրվում են ազգային արժույթի գնողունակության իջեցմամբ: Հաճախ ազգային արժույթի արժևորումը կարող է գնաճի առաջացման պատճառներից մեկը հանդիսանալ երկրի ներսում: Սակայն արտարժույթներն էլ են ենթակա գնաճի, այսինքն՝ հնարավոր է գնաճ տեղի ունենա առանց ազգային արժույթի արժևորման: Իսկ եթե արտարժույթը ենթակա է գնանկման, ապա հնարավոր է ազգային արժույթի արժևորում առանց գնաճի:

Փոխարժեքի և գնային պարիտետի համեմատությունը նպաստում է մրցունակության տեսանկյունից դրամի իրական շուկայական փոխարժեքի միջակայքի գնահատմանը: Երբ հատկապես ճգնաժամային և հետճգնաժամային շրջաններում գերագնահատվում է ազգային արժույթը, ապա դա կարող է արհեստականորեն իջեցնել երկրի մրցունակությունը:

Հեղինակի կողմից նշվել է, որ ՀՀ ԿԲ-ի թույլ կողմերից մեկը արտարժույթների փոխարժեքների տատանումների և դրանց ոչ լիարժեք ու ճշգրիտ կանխատեսման հնարավորությունն է, իսկ գնաճի մակարդակը փոխկապակցված է արտարժույթի փոխարժեքից հատկապես ռուսական ռուբլուց: Հետևաբար անհրաժեշտ է գնահատել գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետությունը: Գնահատման մոտեցումը կայանում է նրանում, որ պետք է պարզել թե ՀՀ ԿԲ-ն, մշակելով և վարելով դրամավարկային քաղաքականություն՝ որքանով արդյունավետ է կարողանում պահել գնաճը իր կողմից նախատեսված սահմանաչափի միջակայքում: Այս հարցին պատասխանելու համար հեղինակի կողմից իրականացվել է դրամավարկային քաղաքականության ադյունավետության որակական և քանակական գնահատում, որի արդյունքները կարելի է տեսնել աղյուսակ 2-ում:

[16] A.A Hossain, Macroeconomic and Monetary Policy, Routledge London and new York, 2012, pp. 16-44

Աղյուսակ 2[17]

Գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության գնահատումը ՀՀ-ում

Ցուցանիշներ	2008թ	2009թ	2010թ	2011թ	2012թ	2013թ	2014թ	2015թ
Սպառողական գների ինդեքս, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, աճողական, (%)	109	103.4	108.2	107.7	102.6	105.8	103	103.7
12-ամսյա գնաճ (դեկտեմբեր-դեկտեմբեր)	9	3.4	8.2	7.7	2.6	5.8	3	3.7
ՀՀ պետական բյուջեով սահմանված 12-ամսյա գնաճի շեմ	4 ± 1,5%	4 ± 1,5%	4 ± 1,5%	4 ± 1,5%	4 ± 1,5%	4 ± 1,5%	4 ± 1,5%	4 ± 1,5%
Գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության որակական գնահատական	Ոչ արդյունավետ	Արդյունավետ	Ոչ արդյունավետ	Ոչ արդյունավետ	Արդյունավետ	Ոչ արդյունավետ	Արդյունավետ	Արդյունավետ
Գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության քանակական գնահատական,	37.0%	100%	50.4%	60.0%	100%	94.0%	100%	100%
Շեղումը սահմանաչափից (%)	3.5%	0%	2.7%	2.2%	0%	0.3%	0%	0%

Գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության քանակական գնահատումը հաշվարկվել է դիտարկելով, որ ԿԲ-ի սահմանված շեմից՝ 4%-ից շեղումը մինչև 1.5% համարվում է թույլատրելի, հետևաբար այն 100% արդյունավետ է, իսկ 5.5%-10% ընկած միջակայքում արդյունավետության մակարդակը նվազում է մինչև 0%: Հետևաբար ԿԲ-ի կողմից գնաճի նպատակադրման քաղաքականության արդյունավետությունը կարելի է հաշվարկել հետևյալ բանաձևով ԿԲ-ի կողմից սահմանված գնաճի մակարդակի շեղման (նշանակենք y տառով) հարաբերակցությամբ 5.5%-ի: Այդ հաշվարկը ավելի մանրամասն կարելի է տեսնել հետևյալ բանաձևում՝

[17] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, Տվյալները վերցված են ՀՀ ԿԲ 2006-2015 թթ. տարեկան տեղեկագրերից և «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքից՝ 2006-2015 թթ

Գնաճի մակրոտնտեսական
կարգավորման արդյունավետություն = **1-(y/5.5) x 100** **(1)**

Որտեղ՝ y- սահմանված գնաճի մակարդակի շեղման,

5.5%-ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված գնաճի առավելագույն մակարդակ:

Գնաճի ընդունելի սահմանաչափերից շեղում արձանագրած տարիների (2008, 2010, 2011, 2013թթ) ցուցանիշների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է շեղման չափի նվազման միտում, ինչը վկայում է ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող քաղաքականության բարելավման մասին: Ընդ որում, առավելագույն շեղում՝ 3,5%, արձանագրվել է 2008 թ., իսկ նվազագույն՝ 0.3%, 2013 թ.:

Ատենախոսության «**Եզրակացություններ**» բաժնում ընդհանրացվել և ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները և կատարվել են եզրահանգումներ: Մասնավորապես, դրված նպատակներին և խնդիրներին համապատասխան ատենախոսը իրականացրել է գնաճի մակրոտնտեսական կարգավորման արդյունավետության հիմնախնդիրների ուսումնասիրություն և վերլուծություն, հանգելով մի շարք արդյունքների, որոնք ներկայացված են ստորև.

- Գնաճը կարելի է բնութագրել, որպես տնտեսություն մեջ գների ընդհանուր մակարդակի բարձրացում, որն ուղեկցվում է դրամական միավորի արժեզրկմամբ: Գնաճի մակարդակը կախված է երկրի տնտեսական կայունության և ազատության մակարդակից: Այն ունի լուրջ սոցիալ-տնտեսական ազդեցություն մասնավորապես՝ ՀՆԱ-ի մակարդակի վրա: Գնաճը համապատասխան իր տեսակից ունենում է տարբեր ֆինանսական գործոններ: Պահանջարկածին կամ պահանջարկի գնաճը առաջ է բերում փողի էմիսիա, եկամուտների տեղաբաշխում, բյուջեի մեծացում, զբաղվածության մակարդակի աճ: Այն երկար ժամանակահատվածում բերում է երկարատև հավասարակշռության: Ծախսածին գնաճի ժամանակ տեղի է ունենում միավոր արտադրանքի ինքնարժեքի բարձրացում, որին զուգահեռ առաջ է գալիս արտադրության ծավալի կրճատում, միաժամանակ բարձրանում են նաև միավոր արտադրանքի գները, պաշարները գերագնահատվում են և այլն:
- Գնաճը և դրա մակարդակը սովորաբար կարգավորվում են երկրի դրամավարկային քաղաքականության գործիքների միջոցով, որը ՀՀ-ում իրականացնում է ՀՀ Կենտրոնական բանկը: ՀՀ Կենտրոնական բանկի հիմնական խնդիրն է հանդիսանում գների կայունացման ապահովումը, որը հնարավոր չէ պահպանել զրոյական մակարդակի վրա: Հետևաբար գների կայունությունը գնաճի չափավոր մակարդակի պահպանումն է:

Դրամավարկային քաղաքականության էությունը կայանում է նրանում, որ Կենտրոնական բանկը դրա շնորհիվ ձգտում է դրամական զանգվածի քանակական փոփոխությունների միջոցով ներգործել տնտեսական աճի տեմպերի, փողի զանգվածի և հասարակության գործարար ակտիվության վրա: Վերջինս իրականացվում է դրամավարկային գործիքների շնորհիվ:

- Կենտրոնական բանկը իր նպատակներին հասնելու համար կիրառում է վերաֆինանսավորման քաղաքականությունը (անուղղակի գործիք), գործառնությունները բաց շուկայում, առևտրային բանկերի ավանդների պարտադիր պահուստավորումը: ՀՀ-ում ԿԲ-ն ֆինանսական շուկաներում հանդես է գալիս դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներով՝ հիմնական վերաֆինանսավորման գործիք, ճշգրտող գործիքներ, կառուցվածքային գործիքներ և մշտական հնարավորության գործիքներ: Հիմնական վերաֆինանսավորման գործիքը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության կարևոր և ամենահաճախակի օգտագործվող գործիքներից մեկն է, որը ենթադրում է Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ ռեպո գործարքի իրականացում. հիմնականում 7 օրյա ժամկետով:
- Հայաստանի Հանրապետությունում գնաճը բնութագրող միակ ցուցանիշը հանդիսանում է սպառողական գների ինդեքսը, որը որոշվում է սպառողական զամբյուղի ապրանքների և ծառայությունների ընթացիկ և բազիսային ժամանակաշրջանների գների ընդհանուր արժեքների հարաբերության միջոցով:
- Գնաճի մակարդակը և ԱՄՆ դոլարի ու ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքները փոխկապակցված են: Դրանց վերլուծության հիման վրա բացահայտվել է արտարժույթի փոխարժեքների ազդեցությունը գնաճի մակարդակի վրա: Ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ ՀՀ-ում գնաճի մակարդակը հասել է իր գագաթնակետին 2009թ ավարտին՝ հասնելով 12 տոկոսի: Միևնույն ժամանակահատվածում հայկական դրամը արժևորված է եղել ԱՄՆ դոլարի նկատմամբ 363.28 դրամ, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկված՝ 11.5 դրամ: 2015թ. ԱՄՆ դոլարը հասել է իր գագաթնակետին՝ արժեզրկելով դրամը մինչև 477.92 դրամ, իսկ ՌԴ ռուբլին ընդհակառակը՝ արժեզրկվել է հասնելով 7.89 դրամի: Միևնույն ժամանակահատվածում գնաճի մակարդակը նվազել է հասնելով 2-4 տոկոսի միջակայքի: Վերը նշված տվյալներից երևում է, որ գնաճի մակարդակը ՀՀ-ում բարձրանում է երբ ՀՀ դրամը արժեզրկվում է Ռուսական Ռուբլու նկատմամբ և հակառակը:
- ՀՀ-ում ավելացված արժեքի հարկի և շրջանառության հարկի տոկոսադրույքների և հարկման մեխանիզմների վերաբերյալ

առանձնահատկություններ գոյություն ունեն: Դրանց վերլուծության հիման վրա բացահայտվել է, որ հարկատեսակների հարկման տոկոսադրույքները ազդեցություն են թողնում գնաճի մակարդակի վրա: Հիմնավորվել է, որ հարկման տարբեր համակարգերի առկայությունը սղաճի խթանման ներքին գործոն է հանդիսանում: Գների բարձրացման պատճառները առավել հստակ պատկերացնելու համար ուսումնասիրվել են տարբեր հարկատեսակներով հարկվող կազմակերպությունների միջև համագործակցության ընթացքում առաջացող գների փոփոխությունը և համեմատվել են միևնույն հարկատեսակներով հարկվող կազմակերպությունների հետ:

- ՀՀ ԿԲ-ի գործունեության SWOT վերլուծության արդյունքում, գնահատվել են ուժեղ և թույլ կողմերը, ներկայացվել առավելություններն ու թերությունները: Միաժամանակ բացահայտվել և որպես թույլ կողմ է ներկայացվել արտարժույթի փոխարժեքի տատանումների ոչ լիարժեք և ճշգրիտ կանխատեսման հնարավորությունները: ՀՀ ԿԲ-ն շատ դեպքերում է շրջանցել ՀՀ դրամի արժեզրկման վտանգը, բայց վերջին տարիներին այնուամենայնիվ դա տեղի է ունեցել: Պատճառներից մեկն այն է, որ վերջին մի քանի տարիների ընթացքում ՀՀ համախառն միջազգային պահուստները մոտավորապես 31%-ով նվազել են (2430.6 միլիոն ԱՄՆ դոլարից մինչև 1663.1 միլիոն ԱՄՆ դոլար համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների): Սա բացասական ազդեցություն է թողել ՀՀ-ում գների մակարդակի բարձրացման և ՀՀ ԿԲ-ի կողմից գնաճի կարգավորման արդյունավետության մակարդակի վրա:
- Վերլուծվել և հիմնավորվել է ՀՀ ԿԲ-ի կողից գնաճի նպատակադրման քաղաքականության անցման և սահմանաչափերի կիրառման նպատակահարմարությունը, ինչպես նաև բացահայտվել և ներկայացվել է գնաճի նպատակադրման քաղաքականության արդյունքները սեզոնային գնաճի կարգավորման նկատմամբ: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում սեզոնային գնաճը խոցում է հիմնականում գյուղատնտեսական մթերքներին, գծապատկերի օգնությամբ կառուցվել է գնաճի սեզոնային պատկերը: Հեղինակը նշել է, որ ՀՀ-ում գնաճի կանխատեսված մակարդակը կազմում է 4 տոկոս: Ներկայացված գծապատկերից պարզվել է, որ տարվա ընթացքում գյուղատնտեսական ապրանքների մասով գնաճը կարող է գերազանցել ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված գնաճի կանխատեսման մակարդակը հասնելով՝ տարեկան մինչև 19 տոկոսի:
- Հեղինակի կողմից փորձ է կատարվել մշակել և ներկայացնել գնաճի մակարդակի կարգավորման և ՀՀ ԿԲ համապատասխան քաղաքականության արդյունավետության քանակական և որակական գնահատման մոտեցում: Որակական գնահատական տալու համար

պարզվել է թե առանձին տարիների կտրվածքով գնաճի ցուցանիշը համապատասխանել է արդյոք ՀՀ պետական բյուջեով սահմանված տվյալ տարվա համար առավեագույն և նվազագույն շեմերին: Հետազոտության արդյունքում պարզվել է, որ 2008թ.-ին արձանագրվել է ուսումնասիվող ամբողջ ժամանակաշրջանում գնաճի ամենից բարձր մակարդակը՝ 9%, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ պետական բյուջեով սահմանված գնաճի շեմը 3.5%-ով, հետաբար տվյալ տարվա համար գնաճի մակրոտնտեսական կարգավորումը արդյունավետ է եղել ընդհամենը 37%-ով: Այս արդյունքը հաշվարկվել է դիտարկելով, որ սահմանված շեմից՝ 4%-ից շեղումը մինչև 1.5% համարվում է թույլատրելի, հետևաբար այն 100% արդյունավետ է, իսկ 5.5%-10% ընկած միջակայքում արդյունավետության մակարդակը նվազում է: Նման պատկեր է արձանագրվել նաև 2010-2011 թթ. ընթացքում, երբ գրանցվել է գնաճի համապատասանաբար 8.2% և 7.7% արժեք, որը սահմանված շեմը խախտել է 2.7%-ով և 2.2%-ով: 2014-2015թթ. ընթացքում ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող դրամավարկային քաղաքականության շնորհիվ հնարավոր է եղել ապահովել գնաճի ընդունեի մակարդակ համապատասանաբար 3% և 3.7%, այդ պատճառով նշված ժամանակաշրջանում գնաճի մակրոտնտեսական կարգավորումը գնահատվում է արդյունավետ: Գնաճի ընդունելի սահմանաչափերից շեղում արձանագրած տարիների (2008, 2010, 2011, 2013թթ) ցուցանիշների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է շեղման չափի նվազման միտում, ինչը վկայում է ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարելավման մասին:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլվել են հրատարակված երեք գիտական հոդվածներում.

1. Галоян М. Р., Инфляция, ее понятия, сущность, определение, “Вестник экономической безопасности”, РФ, Москва, 2016, # 4(251-254).
2. Галоян М. Р., Инфляция, ее исторические проявления и историко-социальные следствия, “Образование, Наука, Научные кадры””, РФ, Москва, 2016, # 4(114-117).
3. Գալոյան Մ. Ռ., ՀՀ Դրամավարկային քաղաքականությունը արդի պայմաններում, «Ֆինանսներ և էկոնոմիկա», Երևան, 2017, # 1-2,(82-84 էջ), 2017.:
4. Գալոյան Մ. Ռ., Գնաճի մակարդակի և արտարժույթի փոխարժեքների փոխկապակցվածության վերլուծությունը, «Ֆինանսներ և էկոնոմիկա»,Երևան, 2017, # 3-4,(199-200),(4-6 էջ):

МИКАЕЛ РОБЕРТОВИЧ ГАЛОЯН

ЭФФЕКТИВНОСТЬ МАКРОЭКОНОМИЧЕСКОГО РЕГУЛИРОВАНИЯ ИНФЛЯЦИИ (НА ПРИМЕРЕ РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 -"Финансы , бухгалтерский учет"

РЕЗЮМЕ

Наиболее важным аспектом социально-экономического развития современной рыночной экономики, являятся эффективность регулирования инфляции. Важным фактором регулирования инфляции является эффективность реализации денежно-кредитной политики. Денежно-кредитная политика ЦБ является набором последовательных стратегических шагов, которые обеспечивают четкое и долгосрочное управление. Эта стратегия представляет из себя разные цели, которые могут быть условно разделены на первозначительные и вторичные. И эти цели реализуются через механизмы и инструменты денежно-кредитного регулирования. Основной целью ЦБ РА является обеспечение стабильности цен, и неэффективное регулирование этой цели может привести к возникновению социально-экономических проблем. Инфляция может как стимулировать, так и сдерживать экономический рост . Функции ЦБ могут подавлять рост уровня цен, но не в состоянии предвидеть и устранить все риски, связанные с потрясениями на мировых финансовых рынках. Эта проблема особенна актуальна обеспечении экономического роста и снижения экономической зависимости от внешнего рынка. Дифференциальная налоговая политика также направлена на снижение уровня инфляции.

Упомянутые выше проблемы имеют необходимость научного исследования и оценки, и для решения этих проблем направлена важность диссертации, каторые подчеркивают его актуальность и неоходимость для экономики РА.

Цель и задачи исследования. Целью диссертации является оценка эффективности регулирования инфляции, факторов влияющих на нее, методов и порядка оценки и расчета инфляционного воздействия на экономическую активность общества посредством изучения и анализа функций Центрального банка, налогово-бюджетной политики и процессов экономического развития. А также на аснове исследований разработать теоретико-методологических аспекты и практические пути регулирования инфляции.

В соответствии с целью исследования в работе поставлены следующие задачи:

- Изучить сущность инфляции и финансовые основы регулирования;
- Исследовать динамику инфляции и факторы влияющие на экономику в РА;
- Проанализировать соотношения между уровнем инфляции и валютных курсов;
- Провести SWOT - анализ Центрального банка;
- Исследоват влияния внутренних и внешних рисков инфляции на фискальную политику;
- Исследовать ДКП и влияние его инструментов на экономические и финансовые рынки;
- Сделать оценку эффективности инфляции для макроэкономического регулирования и предложить пути его улучшения.

Научная новизна и основные результаты исследования. Результаты исследования имеют теоретическую, методическую и практическую направленность, научная новизна которых заключается в следующем:

- На основе исследования соотношения между уровнем инфляции, валютами долара США и РФ рублем по отношению с РА драмом, были выявлены влияние валют на инфляцию;
- в результате SWOT - анализа ЦБ были выялены его сильные и слабые стораны. В качестве слабоцти РА ЦБ была представлена отсутствие возможности полного прогнозирования колебаний валютных курсов, что в свою очередь негативно влияет на цены и эффективност регулирования ДКП;
- были исследованы и обоснованы переход РА ЦБ на целевую политику инфляции и целесобразность поставленных им пределов. А также были определены результаты целевой политики в урегулировании сезонной инфляции;
- был разработан и представлен количественный и качестсенный подход оценки эффективности регулирования уровня инфляции. Для оценки были изучены годовые уровни инфляции и выявлены отклонения от уровня инфляции назначенным государством. Показатели исследования выявили снижающую тенденцию отклонений, что говорит об улучшении регулирования ДКП Центральным.

MIKAYEL GALOYAN ROBERT

THE EFFECTIVENESS OF THE MACROECONOMIC REGULATION OF INFLATION (ON THE MATERIALS OF THE REPUBLIC OF ARMENIA)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 00.03-"Finance and accounting"

ABSTRACT

The most important feature for the social-economic development of the modern market is the effectiveness of macro economical regulation of inflation. The calculation of inflation underlines the effectiveness of the implementation of monetary policy. The monetary policy of any Central Bank is a set of consistent strategic steps that ensure a clear and long-term management. These steps are usually different goals, which can be conditionally divided into primary and secondary. And these goals are realized through mechanisms and instruments of monetary regulations. The main goal of the Central Bank of RA is to ensure price stability, and ineffective regulation of this goal can lead to social-economic problems. Inflation can both stimulate and restrain economic growth. The functions of the central bank can suppress the rise in the price level, but fail to anticipate and eliminate all the risks associated with shocks in the world financial markets. The level of prices in Armenia is heavily dependents on exchange rate fluctuations. From this perspective, the right halves of the assessment and forecast of the inflation rate for currency fluctuations, in order to minimize their impact on the financial market. Differential tax policy is also aimed at reducing inflation. These problems need for scientific research and evaluation, and the urgency of the subject of the dissertation aimed for solution of above mentioned problems which underlines the relevance and importance to the economy of RA.

The purpose and objectives of the research: The main purpose of the research is to figure out the main cause-roots of the inflation, the factors affecting the inflation, methods for calculating and estimating the impact of the inflation on the economic activity through the study and the analysis of the activities, functions, transactions of the Central Bank of the Republic of Armenia, the fiscal policy and economic developments; to design theoretical, methodological and practical approaches to regulating the inflation. For this purpose the following objectives have been defined and met in the dissertation thesis:

· To study the social and economic consequences of inflation, and the methods of its regulation;

. To analyze the financial and economic factors affecting the dynamics of inflation in Armenia

. To analyze the correlation between the level of inflation and currency exchange rates;

· To carry out a SWOT analysis of the Central Bank of Armenia;

· To analyze the impact of fiscal policy of the Republic of Armenia on the rate of inflation.

· To study the monetary policy in the Republic of Armenia, and the effectiveness of inflation-targeting policy of the Central Bank, and the dynamics of inflation;

· To make an assessment of the effectiveness of inflation for macroeconomic regulation and suggest ways for improving it.

The main research results and scientific novelty of the dissertation thesis: The results of the dissertation thesis have theoretical, methodological and empirical implications and the scientific novelty of which is in the following:

. Based on an analysis of correlation of the level of inflation and the US dollar and the ruble exchange rate against the Armenian Dram disclosed the impact on the level of inflation which presents its resolution, accurate forecasting and mitigation approaches.

. As the result of SWOT analysis of CBA of RA, assessing the strengths and weaknesses, fluctuations of exchange rate, not full and accurate forcast capabilities identified and presented as the CBA's weakness which has a negative effect on the prices increase and on the efficiency of inflation level.

. The appropriateness of applying the Central Bank's inflation-targeting policy transitions and its limits were analyzed and proved as well as identified and presented the results of the inflation targeting policy in the settlement of seasonal inflation.

. Analyzing the current tax policy, particularly the analysis of differences of payers of VAT and Turnover tax shows the impact of the interest rates on the inflation level, and confirmed that the different systems of taxation is an internal factor boosting inflation

. The quantitative and qualitative evaluation approach to the inflation level was developed and presented. It was revealed to appraise that if the inflation rate for individual years meet the maximum and minimum thresholds set by the RA state budget for the given year and how it was deviated from it. Indicators survey revealed a decrease in the size of the deviation tendency which support the improvement of policies maintained by the CBA of RA.